ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ 910—930-ԱԿԱՆ ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Պատմ. գիտ. թեկնածու Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

X դարի սկզբին, Հայաստանում տիրող քաղաքական բարդ իրավիճակի պայմաններում, Վասպուրականում ստեղծվեց առանձին թագավորություն։ Դա մասնատեց, թուլացրեց Հայաստանը։

Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին հույս ուներ Ատրպատականի ամիրա Յուսուփի օգնությամբ տիրանալ Հայոց գահին։ Դրա համար անհրաժեշտ էր նվաճել Այրարատը (առաջին հերթին, իհարկե, Նախճավանը), որով Գագիկն իր ձեռքը կդներ նաև Հայաստանով անցնող միջազգային առևտրական մայրուղու հյուսիսային հատվածը։ Պատահական չէ, որ երբ Յուսուփն արշավեց Նախճավան, այստեղ Վասպուրականի զորադնդերը միացան նրա բանակին և արշավեցին Սյունիք[1] (որի տերերը, ինչպես հայտնի է, նույնպես կամենում էին տիրել Նախճավանին)։ Նույն նպատակն էր հետապնդում նաև Վաղարշակերտի պաշարումը։ Սակայն չնայած առերևույթ թվացող համաձայնության, Յուսուփի և Գագիկ Արծրունու միջև կային հակասություններ, որոնք ի վերջո հանգեցրին խզման ու թշնամանքի։ Թեև Գագիկը ամեն կերպ ջանում էր տիրանալ Նախճավանին, սակայն Յուսուփը ոչ մի կերպ չընդառաջեց նրան և քաղաքը պահեց իր հսկողության տակ։ Նույն ժամանակ Յուսուփին հարում էր նաև Աշոտ Շապուհյանը, որը լինելով Բագրատունյաց թագավորող տոհմաճյուղի անդամներից, նույնպես հավակնում էր Հայոց գահին։ Բնական էր սպասել, որ Յուսուփը կարող էր Հայոց գահի թեկնածության համար նախապատվությունը տալ Աշոտ Շապուհյանին։ Ըստ երևույթին հաշվի առնելով այդ, Գագիկ Արծրունին ծածուկ կապերի մեջ մտավ Սմբատ I-ի հետ, խոստանալով համագործակցել ընդդեմ Յուսուփի[2]։ Դեռ ավելին, Գագիկը հաշտվեց նաև Սմբատ Սյունու հետ, մոռացության տալով Նախճավանի շուրջը նրա հարուցած երբեմնի վեճերը։ Սակայն Սմբատ I Բագրատունու զոհվելուց հետո Վասպուրականի վիճակը ծանրացավ։ Ատրպատականի զորադնդերը սկսեցին հարձակումներ գործել Վասպուրականի սահմանամերձ շրջանների վրա։ Հատկապես ծանր կացություն ստեղծվեց 914 թ. գարնանը, երբ Յուսուփը ձեռնարկեց նոր արշավանք դեպի Վասպուրական։ Գագիկ Արծրունին Վասպուրականի բնակչությունը և իր դանձերը փոխադրում է լեռները, իսկ ինքը եղբոր և Սյունյաց իշխան Սմբատի հետ (որն այդ ժամանակ Վասպուրականում էր) մեկնում է «Միջերկրեայք»[3], այսինքն Փոքր Ասիա[4], տվյալ դեպքում՝ բյուզանդական տիրույթները։ Ըստ երևույթին,

---

1 Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, սա կատարվել է հայոց 358 (909) թ. Մեծ զատկին, իմա՝ գարնանը (Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 213—214)։

2 Նույն տեղում, էջ 233։

3 Նույն տեղում, էջ 270։

4 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 13, 100։

Արծրունյաց և Սյունյաց իշխանները հույս ունեին օգնություն ստանալ Բյուզանդիայից ընդդեմ Ատրպատականի։ Նրանց այդ քայլը թերևս համաձայնեցված էր Աշոտ II Երկաթի հետ, որը ևս նույն տարում (ըստ Ն. Ադոնցի՝ 914 թ. սեպտեմբերին[5]) մեկնեց Բյուզանդիա՝ օգնություն ստանալու ակնկալությամբ։ Հայոց թագավորների այս քայլերը տվյալ պահին համապատասխանում էին Բյուզանդիայի արևելյան քաղաքականությանը, որի նպատակն էր խաղաղ, անարյուն միջոցներով տիրել Հայաստանին։

Բյուզանդիայում Գագիկ Արծրունին երկար չի մնացել և վերադարձել է Սմբատ Սյունու հետ, հավանաբար 915 թ.։ Ստեփանոս Օրբելյանի հավաստմամբ, Բյուզանդիայից Աշոտ II-ի վերադառնալուց քիչ հետո, «եկն ի Վասպուրականէ Մեծ իշխանն Սիւնի Սմբատ առ արքայորդին Աշոտ թագաւոր»[6]։ Աշոտ II Երկաթը Բյուզանդիայից վերադարձել է 915 թ.[7]։ Հետևաբար Սմբատ Սյունին նրա մոտ եղել է հենց նույն թվականին։

Բյուզանդիան Վասպուրականին զինական օգնություն ցույց չտվեց։ Երանից զոտեպնդված՝ ըստ երևույթին նույն տարում, Յուսուփ ամիրան վերստին արշավանք ձեռնարկեց դեպի Վասպուրական, որի դրությունը հատկապես ծանրացավ այն բանից հետո, երբ Յուսուփը կարողացավ շեղոքացնել Աշոտ Երկաթին՝ թագ տալով նրան[8]։

Յուսուփը Վասպուրականի դեմ ուժեր նետեց Հերից, Զարևանդից, Մարանդից և Նախճավանից, որոնց հետ Վասպուրականի զորքը բազմիցս ընդհարումներ ունեցավ։ Այս երկրամասերը նախկինում մտնում էին Վասպուրականի իշխանության մեջ, ուստի Գագիկ Արծրունին հավակնություններ ուներ նրանց նկատմամբ և, հավանաբար, Յուսուփն օգտագործեց նաև այդ հանգամանքը՝ հիշյալ շրջանների ամիրաներին հանելով Վասպուրականի դեմ։ Յուսուփի մեծաթիվ զորքին հաջողվեց թափանցել Վասպուրականի կենտրոն՝ Մարդաստան, Տոսպ և այլ գավառներ, որոնց բնակչությունը վերստին ստիպված եղավ հեռանալ Մոկաց և Կորդվաց անառիկ լեռները։ Գագիկ Արծրունուն օգնում էին Մոկքի Գրիգոր իշխանն իր եղբոր՝ Գուրգենի հետ և Անձևացյաց իշխան Ատոմը։ Հավանաբար այս դաշնակցությունն ստիպեց Յուսուփին հրաժարվել Մոկաց և Կորդվաց լեռնաստանները ներխուժելու մտադրությունից և ձեռնունայն վերադառնալ Ատրպատական[9]։

Ըստ Ասողիկի, Յուսուփի ասպատակումները Հայաստանում տևել են «ե ամ»։ Չեռագրերն ունեն «է ամ» տարբերակվածը[10]։ Սա ավելի հավաստի է, քանի որ հաշվելով 908-ից մինչև 915 թ., երբ Յուսուփը հեռացավ Հայաստանից, ստանում ենք իրոք է (7) տարի։

---

[5] N. Adontz, Ašot Erkat ou de fer roi d'Arménie de 913. a 929, „Etudes armeno-byzantines", Lisbonne, 1965, էջ 276. Ռ. Գրուսեն այդ անցքը դնում է 921 թ. (R. Grousset, Histoire de l'Arménie des origines a 1071, Paris, 1947, էջ 415), որը սակայն չի ապացուցվում։

[6] Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, ԼԸ, էջ 193։

[7] N. Adontz, նշվ. աշխ., էջ 276։

[8] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 292, 300։

[9] Նույն տեղում, էջ 289—292։

[10] Ստեփաննոս Տարոնեցի (Ասողիկ), Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, III, է, էջ 169։

Հայաստանից Յուսուֆի հեռացումը բնավ չէր բացառում Վասպուրականի հանդեպ նրա նոր ոտնձգությունների հնարավորությունը։ Դրանք կանխելու նպատակով Գագիկ Արծրունին ուղղակի կապ հաստատեց Մուկթադիր խալիֆայի հետ, որը նույն (915) թվականին թաղ ուղարկեց նրան՝ արտոնելով թագավորել Հայաստանում[11]։ Գագիկի հարելը խալիֆայությանը դարձյալ վկայում է Բյուզանդիայից սպասվող օգնության անհնարին լինելու մասին (կայսրությունն այդ ժամանակ ծանր վիճակում էր[12])։ Խալիֆայի կողմը Գագիկ Արծրունու հակվելուն նպաստեց այն պարագան, որ Յուսուֆ ամիրան նույն ժամանակ ապստամբել էր խալիֆայի դեմ։ Անշուշտ վերջինս, ի դեմս Գագիկի, կամենում էր հակակշիռ ստեղծել ընդդեմ Յուսուֆի։ Ուշագրավ է, որ Ասողիկը հենց նույն ժամանակ (914-ի վերջին կամ 915-ի սկզբին) է հիշում Գագիկ Արծրունու թագադրվելը, քանի որ նրա մահը դնում է 943 թ., միաժամանակ նշելով, որ նա թագավորել է «ամս ԻԹ» (29 տարի)[13]։ Իհարկե, ձեռք բերված խաղաղությունը կարճատև էր։ 923 թ. բանտից ազատվելով, Յուսուֆը վերստին նշանակվեց Ատրպատականի ամիրա[14] և նույն տարում զորքով Միջագետքի վրայով ներխուժեց Կորդուք[15]։ Գագիկ Արծրունին և Անձևացյաց իշխան Ատոմը հարկադրված եղան այս անգամ վասպուրականցիներին զորքով ուղեկցել Կոգովիտ, Ծաղկոտն և Անձևացիր գավառների անմատչելի վայրերը։ Յուսուֆը կամենում էր զենքի ուժով Գագիկ Արծրունուն հարկադրել, որպեսզի արքունի հարկը մուծի ոչ թե ուղղակի խալիֆային, այլ իրեն։ Սակայն խալիֆան նրան այդպիսի արտոնություն չէր տվել։ Ըստ Իբն ալ Ասիրի, խալիֆան միայն 927 թ. է Յուսուֆին արևելքից (այդ թվում և Վասպուրականից) հարկ գանձելու իրավունք տվել[16], կամենալով, անշուշտ, նրան օգտագործել բյուզանդական նոր առաջխաղացման դեմ (նույն թվականին կայսրության զորքը հայազգի Մլեհ զորապետի գլխավորությամբ շարժվեց Հայաստան)[17]։ Մինչդեռ Թովմա Արծրունու շարունակողը գրում է, որ բանտից ազատվելուց անմիջապես հետո Յուսուֆը խալիֆայից իրավունք է ստացել տիրելու ոչ միայն «աշխարհին Պարսից» (իմա՝ Ատրպատականին), այլև «զբոլոր Հայք»[18]։ Պատմիչը ի նկատի ունի փաստացին և ոչ թե իրավականը։ Յուսուֆը, բանտից ազատվելուց անմիջապես հետո, առանց խալիֆայի գիտության, Կորդուքի վրայով ներխուժեց Վասպուրականի Անձևացիք գավառ և «զնսպանս առ իշխանն Ատոմ առաքէր՝ տալ նմա զսակ հարկացն արքունի»։ Այնուհետև նա թափանցել է Արծրունիների բուն ոստանը՝ Աղբակ գավառը, որտեղից հաշտության առաջարկով դեսպաններ է ուղարկել Գագիկ Արծրունու մոտ և «զբաղում ամաց զհարկս արքու-

---

11 Նույն տեղում, էջ 306։ Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, IV, Գ, էջ 468։

12 А. Васильев, Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Македонской династии, СПб., 1902, էջ 198—199։

13 Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող որոշ ձեռագրերում նշվում են Գագիկ Արծրունու թագավորելու տարբեր տարիներ։ Տե՛ս ձեռ. №№ 5467, էջ 22ա, 2294, էջ 74ա։

14 «Из Тарих-ал-Камиль Ибн-ал-Асира», пер. П. Жузе, Баку, 1940, էջ 81։

15 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 327։

16 Ибн-ал-Асир, էջ 83։

17 Նույն տեղում։

18 Թովմա Արծրունի, IV, Գ, էջ 469։

նականս հայցէր տալ նմա», հիշեցնելով նաև Գագիկին առաջին անգամ (908 թ.) իր ձեռքով թագադրելը։ Երկիրը կարոտ էր խաղաղության, ուստի Գագիկը համաձայնում է՝ մուծելով երեք տարվա արքունի հարկը՝ «արծաթ և ոսկի կարասիս բազումս և ձիս և ջորիս», որից հետո միայն Յուսուփը հեռանում է Վասպուրականից[19]։

Այսպիսով, Յուսուփը Վասպուրականի տերերին բռնությամբ է հարկադրել արքունի հարկը ուղարկել իրեն։ Խալիֆան ի վերջո (927 թ.) ճանաչել է նաև Հայաստանի նկատմամբ նրա իրավունքները։ Ստեղծված պայմաններում Յուսուփի հետ խաղաղ հարաբերությունների հաստատումը Արծրունիների համար դառնում է առաջնահերթ, հույժ կարևոր խնդիր։ Ճիշտ է 927 թ. Յուսուփը Հայաստանի ոստիկան նշանակեց Նըսր ամիրային, իսկ ինքը մեկնեց իր նստավայրը՝ Ռեյ, որտեղից ոստիկաններ ուղարկեց նաև Ատրպատական-[0], սակայն այդ նշանակում էր, որ ոչ միայն Հայոց ոստիկանը, այլև Ատրպատականի ամիրաները գործելու էին նրա հրահանգով։ Գագիկ Արծրունին դիվանագիտական ճկուն միջոցներով կարգավորում է հարաբերությունները Յուսուփի հետ։ Վերջինս թագ է ուղարկում՝ Գագիկին, հաստատելով «ի ձեռս նորայ Հայաստան աշխարհ»[21]։ Սա կատարվել է, ըստ երևույթին, 927 թ.։ Ինչպես վերը նշվեց, տակավին 923 թ. Յուսուփն ազատվել էր բանտից և նշանակվել Ռեյի, Ղազվինի, Զենջանի ու Ատրպատականի տեր։ Ըստ Իբն ալ Ասիրի, Յուսուփը բանտում մնացել էր չորս տարի, իսկ Թովմա Արծրունու շարունակողի հաղորդմամբ՝ ութ տարի[22]։ Վերջինս, հավանաբար, նկատի ունի Յուսուփի բանտարկվելուց (919) մինչև Հայաստանի ոստիկան դառնալու տարին, որը, ինչպես տեսանք (համաձայն Իբն ալ Ասիրի վկայության), համընկնում է 927-ին։ Դա էլ հենց Յուսուփի կողմից Գագիկ Արծրունուն երկրորդ անգամ թագ ուղարկելու տարին էր։ Այդ է պատճառը, որ Հովհաննես Դրասխանակերտցին այս փաստը չի հիշում իր «Պատմության» մեջ, քանի որ, ինչպես հայտնի է, նա իր երկն ավարտել է 923 թ.։

Միաժամանակ հնարավոր է դառնում պարզելու Գագիկ Արծրունու եղբոր՝ Գուրգենի (որը կրում էր «Հայաստանի մարզպանի» պատվատիտղոսը) մահվան տարեթիվը։ Թովմա Արծրունու շարունակողը գրում է, որ Գուրգեն Արծրունին վախճանվել է Յուսուփից Գագիկի երկրորդ անգամ թագ ստանալու տարում[23], այսինքն 927 թ.։ Այդ է պատճառը, որ Հովհաննես Դրասխանակերտցին իր երկում չի հիշում նաև Գուրգենի մահը։

Գագիկ Արծրունին հավակնում էր Հայոց գահին։ Այդ ուղղությամբ նա ձեռնարկեց համապատասխան միջոցառումներ։ Դրանցից ամենակարևորը Այրարատին տիրանալու համար կատարված քայլերն էին (Ծաղկոտն, Մասյացոտն գավառների, Դվինի գրավումը և այլն)։ Սակայն առանց Հայոց կաթողիկոսության նկատմամբ իրավասություն ունենալու Գագիկ Արծրունին չէր կարող համարվել Հայոց թագավոր։ Եվ ահա 923 թ. աշնանը Հովհաննես Դրասխանակերտցին մեկնում է Վասպուրական, «առ թագաւորն Հայոց Գագիկ, ըստ

---

19 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 328—330։
20 Նույն տեղում, էջ 330։ Թովմա Արծրունի, IV, Գ, էջ 469։
21 Թովմա Արծրունի, IV, Գ, էջ 469։
22 Ибн-ал-Асир, էջ 81—82։ Թովմա Արծրունի, IV, Գ, էջ 469։
23 Թովմա Արծրունի, IV, Գ, էջ 469։

միշտ հրաւիրման ի կոչման նորա»[24]։ Կաթողիկոսի տեղափոխվելը Վասպուրական ավելի մեծացրեց Արծրունյաց թագավորի հեղինակությունը։ Դրան էլ ավելի նպաստեց Աղթամարի համակառույցի ավարտումը։ Աղթամարի մասին խոսելիս Թովմա Արծրունու շարունակողը Գագիկին հիշում է որպես «Հայոց մեծ արքա»։ Այն փաստը, որ Գագիկ Արծրունին շարունակել է իրեն կոչել «Հայոց թագավոր», վկայված է նաև Աղթամարի վանքի ձախակողմյան ավանդատան վրայի արձանագրությամբ, ուր ընթերցվում են «կտակի իմով ձեռամբ Գագկա Հայոց արքայիս» բառերը[25]։ Սակայն փաստերը վկայում են, որ այս անգամ ևս Գագիկ Արծրունու թագավորության սահմանները դուրս չեկան Վասպուրականից և հարակից մի քանի գավառներից։ Այսպես, Ստեփանոս Տարոնեցին ուղղակի գրում է, որ Գագիկ Արծրունին թագավորել է միայն «ի կողմանս Վասպուրականի»[26]։

Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ Հայաստանում Գագիկ Արծրունու հեղինակությունը բավական մեծ էր։ Հատկանշական է, որ Թովմա Արծրունու շարունակողը հայ Բագրատունի թագավորներից հիշում է միայն Աբասին, բայց առանց «արքա» հորջորջման։ Աբասի գահակալման ժամանակ (929 թ.) արդեն (ըստ երևույթին դեռևս 925 թ.) վախճանված էր Հովհաննես Դրասխանակերտցին, ուստի Գագիկ Արծրունին իրեն է վերապահել Հայոց կաթողիկոս կարգելու իրավունքը[27]։ Դեռ ավելին, Աշոտ II Երկաթի մահից հետո Գագիկ Արծրունին Վասպուրական է հրավիրել նրա եղբորը՝ Աբասին։ Վերջինս ընդունել է հրավերը և մի քանի իշխանների հետ մեկնել Վասպուրական, ուր գումարված իշխանաժողովում Գագիկը Աբաս Բագրատունուն թագադրել է Հայոց թագավոր[28]։ Մի կողմից այս փաստը ցույց է տալիս, որ Գագիկը ճանաչել է Աբասին որպես թագավորի, իսկ մյուս կողմից՝ իրեն իրավունք է վերապահել նրան թագադրելու, շեշտելով Հայաստանում ունեցած իր առաջնությունը։ Սա, անշուշտ, երկուստեք համաձայնության արդյունք էր։

Գագիկ Արծրունու՝ Հայաստանում ունեցած առաջնությունը վկայված է նաև ուրիշ սկզբնաղբյուրներում։ Կոստանդին Ծիրանածինը Բագրատունի առաջին թագավորներին (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) կոչում է «իշխանաց իշխան»։ Սակայն Աշոտ II-ի մահից (929 թ.) հետո այդ տիտղոսը կրում էր Վասպուրականի Գագիկ թագավորը, ուստի Ծիրանածինը Աբաս Բագրատունուն կոչում է ոչ թե «իշխանաց իշխան», այլ «մագիստրոս», իսկ Գագիկ Արծրունուն, թեև «Կայսրության կառավարման մասին» երկում անվանում է «իշխան», սակայն «Արարողությունների մասին» դրքում արդեն՝ «Ասպուրականի կամ Վասպուրականի իշխան, որ այժմ իշխանաց իշխանի պատիվն է ստացել»[29]։ Տվյալ շրջանում այս տիտղոսը համանշանակ էր հայերեն «շա-

---

24 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 358 (նշվում է, որ այս ժամանակ եղբոր հետ Դրասխանակերտցուն ընդունել է նաև Գուրգեն Արծրունին)։

25 Թովմա Արծրունի, IV, է, էջ 478։ Ե. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքերը, «Ազգագրական հանդես», XX գիրք, № 2, Թիֆլիս, 1910, էջ 210։

26 Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԶ, էջ 281։

27 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, Բեյրութ, 1959, էջ 1072։

28 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 822։

29 Կոստանդին Ծիրանածին (Բյուզանդական աղբյուրներ, Բ), թարգմ. Հ. Մ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 10, 7, 151։

հանշահ» պատվանունին, որն իրոք կրում էին առաջին Բագրատունիները և, ըստ երևույթին, նաև Գագիկ Արծրունին։ Վարդան Արևելցին «շահանշահ» է կոչում նաև Վասպուրականի Աբուսահլ-Համազասպ թագավորի (958—968) հաջորդ Աշոտ Արծրունուն, իսկ Անանիա Մոկացին, հիշելով Գագիկ Արծրունուն և Աբասին՝ որպես երկու հայ ինքնակալ թագավորների, առաջին տեղում դնում է Գագիկին[30]։ Նա «արքոնտների արքոնտ» իսկ Աբաս Բագրատունին «Մագիստրոս» են կոչվում նաև Բյուզանդիայի Ռոմանոս Լակապենոս կայսեր (919—944) թղթերից մեկում, որի հետ մեկտեղ կայսրը, ըստ երևույթին, նամակ է ուղարկել նաև Գագիկ Արծրունուն, քանի որ թղթատարն առաջին հերթին ժամանել է նրա մոտ[31]։ Թերևս Գագիկին հղված նամակի պատասխանն էր վերջինիս Թուղթը՝ առաքված նույն Ռոմանոս Լակապենոս կայսրին, ուր Գագիկն առաջարկում էր միջպետական հարաբերություններում անտեսել դավանական տարբերությունները և բարեկամական կապեր հաստատել, որի դեպքում Արծրունի թագավորը կարող էր ընդունել կայսեր գերապետական իրավունքները, ճանաչելով դրանց դարավոր գոյությունը[32]։ Ֆ. Տուրնբրիզի կարծիքով Գագիկ Արծրունու հիշյալ Թուղթը նպատակ ուներ տեղք բերել հայ և բյուզանդական եկեղեցիների դավանական հաշտություն[33], որն իհարկե ճիշտ չէ։ Իրականում Գագիկի այս Թուղթը դիվանագիտական ճկուն քայլ էր, որի նպատակն էր Վասպուրականը ապահովել Բյուզանդիայի կողմից նվաճվելու սպառնալիքից։ Այդ Թուղթը հավանաբար ուղարկվել է կայսրին այն ժամանակ, երբ բյուզանդական բանակները, արաբներին նեղելով, հասել էին Եփրատի ավազանը[34]։

Սակայն Բյուզանդիայի առաջխաղացումը երկար չշարունակվեց։ Ատրպատականի ամիրա Մուֆլիհը (929—937) պարտության մատնեց բյուզանդական զորքին և Գողթն—Նախճավան—Դվին արշավագծով թափանցեց կայսրության տարածքը։ Այս մասին հիշելիս Իբն ալ Ասիրը գրում է, որ 931 թ. Գագիկ Արծրունին և այլ իշխաններ թուղթ են ուղարկել բյուզանդացիներին և նրանց դողել հարձակվելու մահմեդականների վրա՝ խոստանալով օգնել։ Սակայն Մուֆլիհը մեծ զորքով խուժել է Վասպուրական, սրի քաշել մոտ 100 հազար մարդու, որոնց թվում և Գագիկ Արծրունու հարազատներին, իսկ Գագիկն ամրացել է Վասպուրականի բերդերից մեկում[35]։ Ըստ երևույթին Իբն ալ Ասիրը ի նկատի ունի Գագիկ Արծրունու վերոհիշյալ Թուղթը՝ ուղարկված Բյուզանդիայի Ռոմանոս կայսրին։ Իհարկե, այդ թղթում Գագիկը նման հորդորներ կամ խոստումներ չի արել։ Վասպուրականի վրա Մուֆլիհի հարձակման և դրա ծանր հետևանքների մասին Իբն ալ Ասիրի հաղորդումը որոշ

---

30 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, ԾԱ, էջ 92։ Անանիա Մոկացի, Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, «Արարատ», 1897, էջ 129։

31 Տե՛ս Կ. Ն. Յուզբաշյան, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հաղորդագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 1, էջ 36—37։

32 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 301։

33 F. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, էջ 145։

34 „Theophanis Chronographia", Bonnae, 1839, էջ 658։

35 Ибн-ал-Асир, էջ 90։

ուսումնասիրողներ համարել են հավաստի[36], սակայն այն չի հաստատվում հայկական սկզբնաղբյուրներով։ Ըստ երևույթին, վերապահությամբ պետք է մոտենալ նաև մեկ այլ արաբ մատենագրի՝ Իբն Ջաֆիրի վկայությանը՝ Համդանյան Նասր ալ Դաուլա ամիրայի մասին, որն իբր 935 թ. իրենից կախման մեջ է գցել Վասպուրականի հայ «թագավորներին»[37]։ Իրապես հիշյալ ամիրան 935 թ. իր նստավայր Մոսուլի վրա խալիֆայի վեզիր Իբն Մուկլայի զորքի հարձակումից հետո ստիպված անցավ Վասպուրականի Անձևացիք գավառը։ Այս փաստը հիշում է Իբն Միսքավայհը, սակայն առանց նշելու, թե Վասպուրականի թագավորը ընդունել է նրա գերիշխանությունը[38]։ Իրոք, ինչպես նկատում է Մ. Կանարը, Նասր ալ Դաուլայի իշխանությունը չի տարածվել ոչ միայն Վասպուրականի, այլև նույնիսկ նրա Անձևացիք գավառի վրա։ Բացի այդ, հիշյալ ամիրան երկար չմնաց Վասպուրականում, շուտով վերադարձավ Ջազիրա[39]։ Ավելի հավանական է կարծել, որ Նասր ալ Դաուլան ստիպված է եղել անցնել Վասպուրական, որի տերերը հաճությամբ չեն ընդունել նրան։ Տվյալ շրջանում մահմեդական ամիրաների ապաստանելը քրիստոնեական հարևան պետության՝ Վասպուրականի թագավորների մոտ պատահական երևույթ չէր։ Այսպես, Ատրպատականի քուրդ ամիրա Դայսամ Իբրահիմը, երկու անգամ (Գագիկ Արծրունու և նրա հաջորդ Դերենիկ թագավորի օրոք) պարտվելով իր հակառակորդներից, ստիպված եղավ ապաստանել Վասպուրականի թագավորների մոտ[40]։ Դա հետևանք էր առաջին հերթին Վասպուրականի անկախ դիրքի և զորության, ինչպես նաև այն հանգամանքի, որ Վասպուրական ապաստանած ամիրաներին և Արծրունի թագավորներին միացնում էր ընդհանուր թշնամիների դեմ պայքարելու անհրաժեշտությունը։ Օրինակ, 938 թ. նույն Դայսամ Իբրահիմին հաղթող Լաշքարի ամիրան ներխուժեց նաև Վասպուրական, այն մատնեց կողոպուտի և ավերածության, սակայն պարտվեց և սպանվեց Անձևացյաց իշխան Ատոմի կողմից[41]։

Ընդհանուր թշնամիների դեմ միասնաբար պայքարելու անհրաժեշտությունը մերձեցրեց նաև Արծրունի և Բագրատունի թագավորներին։ Այս մասին է վկայում այն փաստը, որ երբ Ատրպատականի ամիրաներից մեկը ներխուժում է Հայաստան՝ Աբաս Բագրատունու տիրույթները, Գագիկ Արծրունին գնում է նրան օգնության. «Յիշեալ զգութ արևան հարաղատութեանն, էլ

---

[36] G. Weil, Geschichte der Chalifen, B. II, Mannheim, 1848, էջ 638։ А. Васильев, նշվ. աշխ., էջ 323։

[37] В. Розен, Император Василий Болгаробойца, СПб., 1897, էջ 102։

[38] Ibn Miskawayh, I (H. Amedroz and D. Margoliouth, The Eclipse of the Abbasid Caliphate. Oxford, 1921, էջ 368, 370)։ M. Canard, Histoire de la Dinastie des Hamdanides de Jazira et de Syrie, I, Paris, 1953, էջ 478։ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 150։

[39] M. Canard, նշվ. աշխ., էջ 478։

[40] Ibn Miskawayh, II, էջ 36—37, 160։ Շադդադյան Մուհամմադը, 952 թ. պարտվելով Սալարյան Մարզուբանից, դարձյալ ապաստանեց Վասպուրականի թագավորի մոտ (V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, էջ 12—13։ Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ-Բաշիի XI—XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 477—478)։

[41] Ibn Miskawayh, I, էջ 443, 446—447։

դնաք զօրօք բազմօք վհարազատին խնդրել զքէն վրիժուց»[42]։ *Յայլ պահին Բագրատունիների և Արծրունիների միջև հաստատված բարեկամական հարաբերությունները խիստ կարևոր նշանակություն ունեին ձևոք բերված խաղաղությունն ամրապնդելու, երկրի անվտանգությունն ապահովելու համար։ Քաղաքական համեմատաբար խաղաղ իրավիճակում երկրում ավելի կայունացան ֆեոդալական հարաբերությունները, ամրապնդվեց հայ իշխանների միջև եղած ֆեոդալական սուբորդինացիան։ Դա միաժամանակ նպաստեց երկրի տնտեսական և քաղաքական զարգացմանը։*

К ИСТОРИИ ВАСПУРАКАНА 910—930 гг.

Кандидат историч. наук В. М. ВАРДАНЯН

(Резюме)

В статье рассматриваются вопросы, связанные с событиями в Васпуракане в первой трети X в., когда в условиях развитого феодализма остро проявился политический партикуляризм Арцрунидов. Правитель Васпуракана Гагик Арцруни, с опозданием отказавшись содействовать правителю Атрпатакана Юсуфу Саджиду, хотел тайно помочь царю Армении Смбату I. После гибели Смбата I в 914 г. Васпуракан подвергся сильному натиску со стороны Атрпатакана. Князья Арцруни были вынуждены переехать в *«Միջերկրեայք»* (Малую Азию), т. е. в византийские владения. В 915 г. Юсуф Саджид, улучшив отношения с царем Ашотом II, вновь совершил поход в Васпуракан, но, встретив сопротивление, был вынужден на время отказаться от захватнических намерений. Мир в Васпуракане временно был обеспечен, когда Гагик Арцруни добился заключения мирного договора (919) с преемником Юсуфа Сбуком. Укреплению мира в Васпуракане способствовало сближение Багратидов и Арцрунидов. В статье затрагиваются и другие вопросы, связанные с историей Васпуракана, делается попытка уточнения некоторых дат.

---

42 *Թովմա Արծրունի, IV, Թ, էջ 488։ Այս ընդհարումը պետք է տեղի ունեցած լինի 911-ից ոչ վաղ, քանի որ ընդհարման ներկա Սղիշն (Եղիսե) կաթողիկոսը հովվել է 941 թ. սկսած։*